

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 2

« 13 » սեպտեմբերի, 2023 թ.

Պ/բ-021-ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝

022201.00.6 – Պատմություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

022201.01.6 – Պատմություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝

բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝

Պատմության

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝

առկա, հեռակա

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ

առկա 4-րդ կուրս, 1-ին կիսամյակ

հեռակա 4-րդ կուրս, 1-ին կիսամյակ

Դասախոս(ներ)՝

Ֆելիքս Մովսիսյան

/անուն, ազգանուն/

Էլ. huygt/ներ_felmov@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
 - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
 - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
 - 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
 - 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
 - 14.1 Ուսանողների գիտելիքների ստուգում
 - 14.2. Հարցաշար
 - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

«Ամերիկայի պատմություն» դասընթացը կարևորվում է պատմության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է «022201.01.6 – Պատմություն» կրթական ծրագրի ուսումնական պլանի «Ընդհանուր մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ է Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորման, Լատինական Ամերիկայի երկրների՝ անկախության համար պայքարի և անկախ պետությունների առաջացման, ԱՄՆ-ի և Լատինական Ամերիկայի երկրների պատմության առավել կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ:

2.2 Դասընթացի խնդիրներն են.

1. Ուսանողներին ծանոթացնել ԱՄՆ-ի ու Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի երկրների պատմությանը
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքները պատմության վերաբերյալ:
3. Ուսանողներին սովորեցնել գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:
4. Նախապատրաստել հետագա մասնագիտական գործունեության:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .

«Ամերիկայի պատմություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների մոտ համաշխարհային պատմության նախորդ փուլերի իմացություն, փաստերը համադրելու և վերլուծելու կարողությունների առկայությունը

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)² և կոմպետենցիաները.

«Ամերիկայի պատմություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. Ամերիկայի պատմության առավել կարևորագույն իրադարձությունների, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ամերիկյան մայրցամաքում առկա պատմական հիմնախնդիրների և դրանց վերաբերյալ ժամանակակից

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

պատմագրության գնահատականների, Ամերիկայի երկրների զարգացման առանձնահատկությունների իմացություն

2. Ամերիկյան մայրցամաքում տեղի ունեցող իրադարձությունները հասկանալու, համաշխարհային քաղաքակրթության վրա դրանց ունեցած ազդեցությունները վերլուծելու, Ամերիկյան մայրցամաքում տեղի ունեցող պատմական գործընթացներն ու իրադարձությունները համեմատելու և դրանց պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն:
3. գիտելիքների կիրառում՝ համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա)Շնորհանրական կոմպետենցիաներ

- կազմակերպչական կարողություն (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում)(**ԳԿ-2**),
- հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում (**ԳԿ - 3**),
- տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում) (**ԳԿ - 7**),
- միջմշակութային տարբերությունները և բազմազանությունները ընկալելու կարողություն (**ՄՁԿ - 4**),
- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն (**ՀԳԿ-1**),
- ուսումնասության կարողություն (**ՀԳԿ -3**),
- նոր իրավիճակներին հարմարվելու կարողություն (**ՀԳԿ -4**),

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ՄԿ)

1. ունենա հիմնարար մասնագիտական գիտելիքներ պատմությունից և կարողանա դրանք կիրառել գործնականում (**ՄԿ-1**)
2. կարողանա կատարել պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն (**ՄԿ-2**)

3. կարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները (ՄԿ-3)
4. կարողանա կոնկրետ տեսական գիտելիքները կիրառել պատմական իրողությունները հասկանալու համար (ՄԿ-6)
5. կարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար (ՄԿ-8)
6. կարողանա պատասխանատվություն ստանձնել հետագա ուսումնառության համար (ՄԿ-11)

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

«Ամերիկայի պատմություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել պատմության բնագավառում մասնագիտական գործունեության ընթացքում, ուսումնական հաստատություններում աշխատելու, կրթությունը հաջորդ փուլերում շարունակելու և պատմագիտության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	5 կրեդիտ/150 ժամ	5 կրեդիտ/150 ժամ

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն	54	10
Գործնական աշխատանք		
Սեմինար պարապմունք	18	6
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	78	132
Ընդամենը	150	150
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ընթացիկ քննություն	ընթացիկ քննություն

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները⁴.**

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրվող, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաձանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Չեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

8. **Դասավանդման մեթոդներն են**⁶ դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական և խմբային, ուսուցում գործողությամբ, իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր, խաղայնացում
9. **Ուսումնասության մեթոդներն են**⁷ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, համեմատման և համակարգման սխեմաների կազմում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապրազներ	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	ինքնուրույն աշխատանք
1.	Անգլիայի Հյուսիսամերիկյան գաղութների անկախության համար պատերազմը: ԱՄՆ-ի կազմավորումը	4	4			6
2.	Ամերիկայի Միացյալ Նահանգները XIX դարի առաջին կեսին	4	2			6
3.	Լատինական Ամերիկայի երկրները XVI-XIX դարերում	4	2			6
4.	1861-1865թթ. քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում և Հարավի վերակառուցումը	4	2			6
5.	ԱՄՆ-ը 1870-1900թթ.	4				6
6.	Լատինական Ամերիկան 1870-1918թթ.	4				6
7.	ԱՄՆ-ը «նոր ինվերիալիզմի դարաշրջանում» /1901-1921թթ./	4	2			6
8.	ԱՄՆ-ը 1921-1939թթ.: ԱՄՆ-ի տնտեսական և ներքաղաքական վիճակը:	4	2			6
9.	ԱՄՆ-ը երկրորդ աշխարհամարտի տարիներին /1939-1945թթ./	4	2			6
10.	ԱՄՆ-ը «սառը պատերազմի» տարիներին	4	1			6
11.	ԱՄՆ-ը 1977-2020թթ.	4	1			4
12.	Արգենտինան 1918-2020թթ.	2				4
13.	Բրազիլիան 1918-2020թթ.	2				4
14.	Մեքսիկան 1918-2020թթ.	2				4

⁸ Նման է օրացուցային պլանին

15.	Չիլին 1918-2020թթ.	2			4
16.	Կուրան 1918-2020թթ.	2	2		4
ԸՆԴԱՍԵՆԸ		54	18		78

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	М.В.Пономарев, С.Ю. Смирнов, Новая и новейшая история стран Европы и Америки, том 1-3	М., 2004
2	Всеобщая история, часть 1, ред. кол. А.В.Лубков и др.	М. 1999
3	Новая и новейшая история стран Европы и Америки, том 1-3 под ред. А.М. Родригеса, М. В.Пономарева	М., 2003-2008
4	Маникын, Новая и новейшая история стран Европы и Америки	М., 2003
5	Новейшая история стран Европы и Америки, под ред. А.М. Родригеса, М. В.Пономарева	М., 2009
6	Новая история стран Европы и Америки, под ред. И.М.Кривогуза и др.	М., 2002
7	Гренвилл Дж. История XX века	М., 1999
8	Мировая история в датах/ Д.Чизхолм	М., 1996
9	Хрестоматия по всеобщей истории	М., 1991
10	Сборник документов по истории нового времени стран Европы и Америки	М., 1990
11	Новейшая история зарубежных стран: Европа и Америка, под ред.Фураева и др.	М., 1989

12	Новая история стран Европы и Америки, под ред. А.Адо и др.	М., 1986
13	Хрестоматия по новейшей истории, том 1-3	М., 1960
14	Ефимов А.В. Очерки истории США,	М., 1955
15	Зубок Л.И. Очерки истории США,	М., 1956
16	Зубок Л., Яковлев Н., Новейшая история США,	М., 1972
17	Иванян Э. А. Белый дом: Президенты и политики,	М. 1979
18	История США, Под ред. Г.Н. Севостьянова, том 1-4	М., 1972-1985
19	Куропятник Г.П. Вторая американская революция,	М., 1961
20	Куропятник Г.П. Война за независимость и образование США,	М., 1976
21	Война за независимость и образование США. Под ред. Г.Н. Севостьянова,	М., 1976
22	Лан В.И. США: От Первой до второй мировой войны,	М., 1976
23	Лан В.И. От испано-американской до Первой мировой войны,	М., 1975
24	Манькин А.С., История двухпартийной системы США,	М., 1981.
25	Мельников Ю.М. От Потсдама до Гуама: очерки американской дипломатии.	М., 1974
26	Печатнов. В.О. США. Политическая мысль и история,	М., 1976
27	Печатнов. В.О. Демократическая партия США,	М., 1981
28	Сивачев Н.В. Языков Е.Ф. Новейшая история США,	М., 1984
29	Слезкин Л.Ю. Испано-Американская война 1898г.,	М., 1956
30	Словарь американской истории, Под ред. Фурсенко А. А.	СПб, 1997
31	Современные Соединенные Штаты Америки.	
32	Энциклопедический словарь, Под ред. Э.А.Иваняна,	М., 1989.
33	Согрин В.В. Идеиные течения в Американской революции XVIII века,	М., 1980
34	Согрин В.В. Основатели США.	М., 1983
35	Согрин В.В. Мифы и реальность американской истории.	М., 1986

36	Согрин В.В. Идеология в американской истории. От отцов основателей до конца XX века	М., 1995
37	Согрин В.В. Белый дом: Президенты и идеология.	М. 1998
38	Согрин В.В. Политическая история США.	М. 2001
39	Фостер У. Очерки политической истории Америки	М. 1955
40	Яковлева Н.Н. Франклин Рузвельт: человек и политик	М. 1981
41	Абраамов Ю.К., Феномен Рональда Рейгана // Политические портреты.	М., 1989
42	Бурстин Э. Чили при Альенде	М. 1975
43	Королев Ю.Н. Чили: революция и контрреволюция: проблемы и дискуссии.	М. 1982.
44	Сергеев Ф. Чили: анатомия заговора	М., 1986
45	Штрахов А. И., Освободительная борьба народа Ла-Платы в 1810-1816гг.	НИИ, 1960
46	Ионина А. С., По Южной Америке, том 1-2	СПб, 1896
47	Испано-британский конфликт	<< КА >>, 1933
48	Зорина А.М., Освободительное движение на Кубе в первой четверти XIX в., в сб.: Война за независимость в Латинской Америке / 1810-1826/	М., 1964.
49	История Кубы и ее отношений с США. 1492-1895, N 1-2, пер. с англ.	М., 1963-1964
50	Латинская Америка в прошлом и настоящем, сборник статей	М., 1960
51	Очерки истории Чили	М. 1967
52	Никитин М. Чили	М., 1965
53	Глинкин А.Н. Новейшая история Бразилии /1939-1959/	М., 1961
54	Очерки новой и новейшей истории Мексики, 1810-1945	М., 1960,
55	Паркс Г. История Мексики, пер. с исп.	М., 1959
56	Мирошевский Б.М., Освободительные движения в американских колониях Испании от их завоевания до войны за независимость /1492-1810/	М.-Л., 1946
57	История Латинской Америки, пер. с англ.	М., 1960
58	Иванов Г.И., Народные восстания в Мексике во второй половине XVII века, НИИ	М., 1964
59	Альперович М.С., Война за независимость Мексики /1810-1824/	М., 1960
60	Потокова Н.В., Агрессия США против Мексики 1846-1848гг.	М., 1962:

61	Беленький А.Б., Разгром мексикнским народом иностранной интервенции /1861-1867/	М., 1959.
62	Новая история, том 1, под ред. В.Ф. Поршнева и др.	М., 1964
63	Новая история, том 1, под ред. А.А.Нарочницкого	М., 1972
64	Новая история, том 1, под ред. Е.Е. Юровской и др.	М., 1972

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն ⁹
1.	Անգլիայի Հյուսիսամերիկյան գաղութների անկախության համար պատերազմը: ԱՄՆ-ի կազմավորումը	Գաղութների բնակչությունը: Գաղութների ներքին կարգը, տնտեսությունը: Գաղութարարներն ու հնդկացիները: Մայր երկրի ու գաղութների տնտեսական ու քաղաքական հակասությունները: Դրոշմահարկի, Թաունշենդի օրենքները: «Ազատության զավակներ» գաղտնի կազմակերպությունը: «Բոստոնյան թեյախմությունը»: 1-ին մայրցամաքային վեհաժողովը: Անկախության համար պատերազմի սկիզբը: Մայրցամաքային 2-րդ վեհաժողովը: ԱՄՆ անկախության հռչակագիրը: Պատերազմի ընթացքը: Մարատոզայի ճակատամարտը: Պատերազմի ավարտը: ԱՄՆ կազմավորումը: ԱՄՆ-ի սահմանադրությունը	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Куропятник Г.П. Война за независимость и образование США, М., 1976 Война за независимость и образование США. Под ред. Г.Н. Севостьянова, М., 1976
2.	Ամերիկայի Միացյալ Նահանգները XIX դարի առաջին կեսին	ԱՄՆ-ը XVIII դարի ֆրանսիական հեղափոխության տարիներին: Ջ.Վաշինգտոնի նախագահությունը: Թ. Ջեֆֆերսոնի նախագահությունը: 1812-1814թթ. անգլո-ամերիկյան պատերազմը: 1820թ. Միսսուրյան փոխզիջումը: Ջ.Մոնրոյի նախագահությունը, Մոնրոյի դոկտրինան: Է.Ջեքսոնի նախագահությունը: Պայքար ստրկության դեմ: Մեքսիկայի հետ պատերազմը, 1848թ. հաշտության պայմանագիրը: 1850թ. փոխզիջումը: Ջ. Բյուքենենի նախագահությունը, նրա ներքին ու արտաքին	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Зубок Л., Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Лан В.И. От испано-американской до Первой мировой войны, М., 1975 Манькин А.С., История двухпартийной системы США, М., 1981.

⁹ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		<u>քաղաքականությունը</u>		
Լատինական Ամերիկայի երկրները XVI-XIX դարերում	Իսպանիայի գաղութային նվաճումներն Ամերիկայում XVI դարում: Գաղութային կարգը: Պայքար իսպանական գաղութային տիրապետության դեմ: Ֆրանցիցկո Միրանդա: 1791-1804թթ. հեղափոխական, ազատագրական պայքարը Հայիթիում: Իսպանական տիրապետության դեմ ազատագրական պայքարի 1-ին փուլը /1810-1815թթ./: Ազատագրական պայքարի 2-րդ փուլը /1816-1826թթ./: Անկախ պետությունների ստեղծումը	2	Мирошевский Б.М., Освободительные движения в американских колониях Испании от их завоевания до войны за независимость /1492-1810/, М.-Л., 1946., История Латинской Америки, пер. С. Англ., М., 1960, Иванов Г.И., Народные восстания в Мексике во второй половине XVII века, ННИ, 1964, Альперович М.С., Война за независимость мексики /1810-1824/, Потокова Н.В., Агрессия США против Мексики 1846-1848гг., М., 1962: Беленький А.Б., Разгром мексиканским народом иностранной интервенции /1861-1867/, М., 1959.	
1861-1865թթ. քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում և Հարավի վերակառուցումը	Հյուսիսը և Հարավը պատերազմի սկզբում: 1854-1856թթ. քաղաքացիական պատերազմը Կանզասում: Դեյտ Սկոտտի գործը: Ջոն Բրաունի ապստամբությունը /1859թ./: 1860թ. նախագահական ընտրությունները: Ա.Լինքոլն: Ստրկատերորի խռովությունը, քաղաքացիական պատերազմի սկիզբը: Պատերազմի առաջին փուլը /1861-1862թթ./: Ստրկության խնդիրը: Պատերազմի երկրորդ փուլը /1863-1865թթ./: Ստրկության վերացումը, հոմսթեյների մասին օրենքը: Եվրոպական պետությունների ու ԱՄՆ-ի հարաբերությունները քաղաքացիական պատերազմի տարիներին: Հյուսիսի հաղթանակը: Հարավի վերակառուցումը: Է.Ջոնսոնի նախագահությունը	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Куропятник Г.П. Вторая американская революция, М., 1961 Манькин А.С., История двухпартийной системы США, М., 1981	
ԱՄՆ-ը 1870-1900թթ.	Ու. Գրանտի նախագահությունը: ԱՄՆ-ի ներքաղաքական ու տնտեսական վիճակը: Ագրարային տնտեսության զարգացումը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: 1889թ. Պանամերիկյան 1-ին գագաթնաժողովը: Նվաճումները Հեռավոր Արևելքում և Խաղաղ օվկիանոսում: Քաղաքականությունը Չինաստանի նկատմամբ: 1898-1899թ. իսպանա-ամերիկյան պատերազմը:	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Лан В.И. От испано-американской до Первой мировой войны, М., 1975 История двухпартийной системы США, М., 1981.	
Լատինական Ամերիկյան 1870-1918թթ.	Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական և քաղաքական զարգացման հիմնական գծերը: Լատինական	2	Ионина А. С., По Южной Америке, том 1-2, СПб, 1896	

		Ամերիկայի երկրների պայքարը օտարերկրյա շահագործման դեմ: Կուրսն 1870-1918թթ.: Մեքսիկան 1870-1918թթ.: Բրազիլիան 1870-1918թթ. Արգենտինան 1870-1918թթ.:		
	ԱՄՆ-ը «նոր իմպերիալիզմի դարաշրջանում» /1901-1921թթ./	Թեոդոր Ռուզվելտի 1-ին կաբինետի ներքին քաղաքականությունը: Թ. Ռուզվելտի «արդարացի կուրսը»: Հանրապետական կուսակցության պատակտումը: Ռուզվելտի արտաքին քաղաքականությունը ԱՄՆ-ը և 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմը: Ու. Թաֆտի նախագահությունը: Առաջադիմական ուժերի համախմբումը: Վուդրո Վիլսոնի նախագահությունը, նրա ներքին և արտաքին քաղաքականությունը: ԱՄՆ-ի մասնակցությունն 1-ին աշխարհամարտին: ԱՄՆ-ը և խորհրդային Ռուսաստանում միջազգային զավթախուժումը: Վերսալի պայմանագիրը: 1920թ. ընտրությունները:	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Зубок Л., Яковлев Н., Новейшая история США, М., 1972 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Лан В.И. США: От Первой до второй мировой войны, М., 1976 Манькин А.С., История двухпартийной системы США, М., 1981.
	ԱՄՆ-ը 1921-1939թթ.: ԱՄՆ-ի տնտեսական և ներքաղաքական վիճակը:	Ու.Հարդինգի վարչակարգի արտաքին քաղաքականությունը: Կ. Կուլիջի վարչակարգի ներքին ու արտաքին քաղաքականությունը: 1928թ. ընտրությունները: ԱՄՆ-ը մեծ անկման տարիներին: Ֆրանկլին Ռուզվելտի «նոր կուրսը»: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: ԽՍՀՄ ճանաչումը:	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Зубок Л., Яковлев Н., Новейшая история США, М., 1972 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Лан В.И. США: От Первой до второй мировой войны, М., 1976
	ԱՄՆ-ը երկրորդ աշխարհամարտի տարիներին /1939-1945թթ./	ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 1930-ական թվականներին: ԱՄՆ-ը և 1938թ. Պանամերիկյան գազաթնաժողովը և Մյունխենի համաձայնագիրը: ԱՄՆ-ի մասնակցությունը 2-րդ աշխարհամարտին: Թեհրանի և Յալթայի գազաթնաժողովները: 1944թ. նախագահական ընտրությունները, Ֆ. Ռուզվելտի մահը: Երկրորդ աշխարհամարտի ավարտը, ԱՄՆ-ը Պոտսդամի գազաթնաժողովում: Ատոմային դիվանագիտության սկիզբը:	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956 Зубок Л., Яковлев Н., Новейшая история США, М., 1972 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Лан В.И. США: От Первой до второй мировой войны, М., 1976 Мельников Ю.М. От Потсдама до Гуама: очерки американской дипломатии. М., 1974
	ԱՄՆ-ը «սառը պատերազմի»	ԱՄՆ-ը և միջազգային հարաբերությունները 2-րդ աշխարհամարտից հետո: Հ.Թրումենի արտաքին	2	Ефимов А.В. Очерки истории США, М., 1955 Зубок Л.И. Очерки истории США, М., 1956

	տարիներին	քաղաքական կուրսը: «Մառը պատերազմի» սկիզբը: Թրումենի դոկտրինան: «Մարշալի պլանը»: ՆԱՏՕ-ի ստեղծումը: ԱՄՆ-ը և կորեական պատերազմը: 1952 թ. նախագահական ընտրությունները: Դ. Էյզենհաուերի ներքին և արտաքին քաղաքականությունը: Ջոն Բենեդիկի նախագահությունը: ԱՄՆ - ԽՍՀՄ հարաբերությունները, Կարիբյան ճգնաժամը: Ջ. Բենեդու մահը, Լ. Ջոնսոնի նախագահությունը: «Մեծ հասարակություն» ծրագիրը: 1964թ. ընտրությունները: Պատերազմը Վիետնամում: Ներքաղաքական վիճակի սրումը: Ռ. Նիքսոնի նախագահությունը: «Գուամի դոկտրինան»: 1972թ. ընտրությունները: «Ուոթերգեյթյան խայտառակությունը»: Ջ. Ֆորդի կարճատև կառավարումը:		Зубок Л., Яковлев Н., Новейшая история США, М., 1972 Иванян Э. А. Белый дом: Президенты и политики, М. 1979 Манькин А.С., История двухпартийной системы США, М., 1981. Мельников Ю.М. От Потсдама до Гуама: очерки американской дипломатии. М., 1974
	ԱՄՆ-ը 1977-2020թթ.	Ջ.Քարտերի նախագահության տարիները: Չինաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Մոսկվայի օլիմպիական խաղերի բոյկոտումը: 1980թ. նախագահական ընտրությունները: Ռ.Ռեյգանի առաջին վարչակազմի ներքին քաղաքականությունը: 1984թ. ընտրությունները: Ռ. Ռեյգանի երկրորդ վարչակազմի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Ջորջ Բուշի վարչակազմի ներքին ու արտաքին քաղաքականությունը: ԱՄՆ-ի հարաբերությունները սոցիալիստական ճամբարի երկրների հետ: Բիլ Բլինթոնի վարչակազմի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Բարաք Օբամայի նախագահությունը	2	Современные Соединенные Штаты Америки. Энциклопедический словарь, Под ред. Э.А.Иваняна, М., 1989. Согрин В.В. Мифы и реальность американской истории. М., 1986 Согрин В.В. Идеология в американской истории. От отцов основателей до конца XX века, М., 1995 Согрин В.В Президенты и демократия. М. 1998 Согрин В.В. Политическая история США. М. 2001
	Արգենտինան 1918-2020թթ.	Տնտեսական և ներքաղաքական վիճակը Առաջին աշխարհամարտից հետո: 1922թ. նախագահական ընտրությունները: Ռազմական բռնապետության հաստատումը: Պայքարին ազգային ճակատի համար Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Խուան Պերենի ազգայնամոլական վարչակարգը: Զինվորական բռնապետության տարիները: Խուստիսիալիստական ճակատի իշխանության գալը: Ֆոկլենդյան /Մալվինյան/	2	Гонионский С., Латинская Америка и США. 1939-1959., М., 1960 Очерки истории Аргентины, под ред. В.И. Ермолаева и др., М., 1961

		կղզիների խնդիրը: Արգենինան 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին:		
Բրազիլիան 1918-2020թթ.		Տնտեսական և քաղաքական վիճակը առաջին աշխարհամարտից հետո: «Անպարտելի շարասյան» արշավանքը: Նախագահ Վ.Լուիսի իշխանության գալը /1926թ./ Ժեռոպիու Վարգասի դիկտատուրայի հաստատում: 1934թ. սահմանադրությունը: Վարգասի կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: 1956-1964թթ հակաիմպերիալիստական շարժումը: 1964թ. զինվորական հեղաշրջումը: Ներքին և արտաքին քաղաքականությունը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:	2	Ионина А. С., По Южной Америке, том 1-2, СПб, 1896 Глинкин А.Н. Новейшая история Бразилии /1939-1959/, М., 1961
Մեքսիկան 1918-2020թթ.		1917-1923թթ քաղաքական պայքարը: Պ.Փայլեաի դիկտատուրայի հաստատումը: Լասարո Կարդենասի կառավարությունը /1934-1940թթ./: Մեքսիկան երկրորդ աշխարհամարտից հետո: Դեմոկրատական և հակաիմպերիալիստական շարժման ուժեղացումը 1960-1970-ական թվականներին: Արտաքին և ներքին քաղաքականությունը 1970-2000թթ. Ժամանակակից Մեքսիկան	2	Очерки новой и новейшей истории Мексики, 1810-1945, М., 1960, Паркс Г. История мексикки, пер. С исп., М., 1959
Չիլին 1918-2020թթ.		Չիլին Առաջին աշխարհամարտից հետո: Ալեսանդրիի կառավարությունը: 1930-ական թթ. քաղաքական հեղաշրջումները և զանգվածային : Ժողովրդական ճակատի ձևավորումը, նրա պայքարը և հաղթանակը: Չիլին Երկրորդ աշխարհամարտից հետո: Դեմոկրատական այլանախ կառավարության իշխանության գալը: 1950-1960-ական թթ. դեմոկրատական շարժումը: Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության իշխանության գալը: Ժողովրդական ճակատի կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը/ 1970-1973/: 1973թ. սեպտեմբերի 11-ի զինվորական հեղաշրջումը: Ջինվորական դիկտատուրայի հաստատումը: Ա. Պինչեթիի զինվորական իշխանությունը, նրա անկումը: Ժամանակակից Չիլին:	2	Бурстин Э. Чили при Альенде, М. 1975 Королев Ю.Н. Чили: революция и контрреволюция: проблемы и дискуссии. М. 1982. Сергеев Ф. Чили: анатомия заговора, М., 1986 Латинская Америка в прошлом и настоящем, сборник стстей, М., 1960 Очерки истории Чили, М. 1967, Никитин М. Чили, М., 1965
Կուբան 1918-2020թթ.		Կուբան Առաջին աշխարհամարտից հետո: Մաչադոյի դիկտատուրայի հաստատումը, նրա կառավարումը և անկումը: Ներքաղաքական պայքարը 1930-ական թթ.: Կուբան 1940-1950-ական թթ: 1959թ. հեղափոխությունը:	2	История Кубы и ее отношений с США. 1492-1895, N 1-2, пер. с англ. М., 1963-1964 Латинская Америка в прошлом и настоящем, сборник стстей, М., 1960

		Ֆ. Կաստրոյի իշխանության գալը: Սոցիալիստական շինարարության տարիները: Կարիքյան ճգնաժամը: Հարաբերությունները սոցիալիստական ճամբարի երկրների հետ: Ֆ. Կաստրոյի ներքին և արտաքին քաղաքականությունը: Ֆ. Կաստրոյի հրաժարականը: Ռաուլ Կաստրոյի կառավարությունը, բարեփոխումներ ներքաղաքական կյանքում:		<i>Фидель Кастро</i> Размышления команданте. — М., 2009. <i>Бородаев В. А., Леонов Н. С.</i> Фидель Кастро. Политическая биография. — М., 1999. <i>Бэлфор С.</i> Фидель Кастро — Ростов н/Д., 1997 <i>Кастро Ф.</i> Агрессивные Штаты Америки — М., 2010.

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Մտնուզման ձևը	Գրականություն ¹⁰
1.	Անգլիայի Հյուսիսամերիկյան գաղութների անկախության համար պատերազմը: ԱՄՆ-ի կազմավորումը	Գաղութների բնակչությունը: Գաղութների ներքին կարգը, տնտեսությունը: Գաղութարարներն ու հնդկացիները: Մայր երկրի ու գաղութների տնտեսական ու քաղաքական հակասությունները: Դրոշմահարկի, Թաունշենդի օրենքները: «Ազատության զավակներ» գաղտնի կազմակերպության ձևավորումը: «Բոստոնյան թեյախմությունը»: Առաջին մայրցամաքային վեհաժողովը: Անկախության համար պատերազմի սկիզբը: Մայրցամաքային երկրորդ վեհաժողովը: ԱՄՆ անկախության հռչակագիրը: Պատերազմի ընթացքը: Սարատոգայի ճակատամարտը: Պատերազմի ավարտը: ԱՄՆ կազմավորումը: ԱՄՆ-ի սահմանադրությունը:	2	Հարց ու պատասխան, իրավիճակային վերլուծություն, խնդրի առաջադրում, խմբային քննարկում	<i>տես գր. ցանկը, 1, 3, 5, 6, 7, 10</i>
2.	Ամերիկայի Միացյալ Նահանգները XIX դարի առաջին կեսին	Ամերիկայի Միացյալ Նահանգները XVIII դարի ֆրանսիական հեղափոխության տարիներին: Ջ. Վաշինգտոնի նախագահությունը: Թ. Ջեֆֆերսոնի նախագահությունը: 1812-1814թթ. անգլո-ամերիկյան պատերազմը: 1820թ. Միսսուրիյան փոխգիջումը: ԱՄՆ տնտեսության զարգացումը:	2	Հարց ու պատասխան, իրավիճակային վերլուծություն, խնդրի	<i>տես պարտադիր գր. ցանկը, 1, 3-5, 6, 7, 10</i>

¹⁰ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		Ջ.Մոնրոյի նախագահությունը, Մոնրոյի դոկտրինան: Է. Ջեքսոնի նախագահությունը: Պայքար ստրկության դեմ: Մեքսիկայի հետ պատերազմը, 1848թ. հաշտության պայմանագիրը, մեքսիկական հողերի միացումը ԱՄՆ-ին: 1850թ. փոխզիջումը: Ջ. Բյուքենենի նախագահությունը, նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը:		առաջադրում, խմբային քննարկում	
	Լատինական Ամերիկայի երկրները XVI-XIX դարերում	Իսպանիայի գաղութային նվաճումներն Ամերիկայում XVI դարում: Գաղութային կարգը: Պայքար իսպանական գաղութային տիրապետության դեմ: Ֆրանցիցկո Միրանդա: 1791-1804թթ. հեղափոխական, ազատագրական պայքարը Հայիթիում: Իսպանական գաղութային տիրապետության դեմ ազատագրական պայքարի առաին փուլը /1810-1815թթ./: Ազատագրական պայքարի երկրորդ փուլը /1816-1826թթ./: Անկախ պետությունների ստեղծումը և զարգացումը:	2	Հարց ու պատասխան իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում	<i>տես պարտադիր գր. ցանկը, 1, 3-5, 6, 7,10</i>
	1861-1865թթ. քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում և Հարավի վերակառուցումը	Հյուսիսը և Հարավը պատերազմի սկզբնական փուլում: 1854-1856թթ. քաղաքացիական պատերազմը Կանգասում: Դրետ Սկոտտի գործը: Ջոն Բրաունի ապստամբությունը /1859թ./: 1860թ. նախագահական ընտրությունները: Ա.Լինքոլնի նախագահությունը, նրա ներքին քաղաքականությունը: Ստրկատերորի խռովությունը, քաղաքացիական պատերազմի սկիզբը: Պատերազմի առաջին փուլը /1861-1862թթ./: Ստրկության խնդիրը: Պատերազմի երկրորդ փուլը /1863-1865թթ./: Ստրկությամ վերացումը, հոմաթեղների մասին օրենքը: Եվրոպական պետությունների ու ԱՄՆ-ի հարաբերությունները քաղաքացիական պատերազմի տարիներին: Հյուսիսի հղթանակը: Հարավի վերակառուցումը: Է.Ջոնսոնի նախագահությունը:	2	Հարց ու պատասխան իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում	<i>տես պարտադիր գր. ցանկը, 1, 3-5, 6, 7,10</i>
	ԱՄՆ-ը «նոր ինպերիալիզմի դարաշրջանում» /1901-1921թթ./	Թեոդոր Ռուզվելտի առաջին կաբինետի ներքին քաղաքականությունը: Թ. Ռուզվելտի «արդարացի կուրսը»: Հանրապետական կուսակցության պառակտումը: Թ.Ռուզվելտի արտքին քաղաքականությունը ԱՄՆ-ը և 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմը: Ու. Թաֆտի նախագահությունը: Առաջադիմական ուժերի համախմբումը: Վուդրո Վիլսոնի նախագահությունը, նրա ներքին և արտաքին քաղաքականությունը: ԱՄՆ-ի մասնակցությունն առաջին	2	Հարց ու պատասխան իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում	<i>տես պարտադիր գր. ցանկը, 1, 3-5, 6, 7,10</i>

		աշխարհամարտին: ԱՄՆ-ը և խորհրդային Ռուսաստանում միջազգային զավթախուժումը: Վերսալի խաղաղության դաշինքը: 1920թ. ընտրությունները:			
ԱՄՆ-ը 1921-1939թթ. ԱՄՆ-ի տնտեսական և ներքաղաքական վիճակը:	Ու.Հարդինգի վարչակարգի արտաքին քաղաքականությունը: Կ.Կուլիջի վարչակարգի ներքին ու արտաքին քաղաքականությունը: 1928թ. ընտրությունները: ԱՄՆ-ը մեծ անկման տարիներին: Ֆրանկլին Ռուզվելտի «նոր կուրսը»: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: ԽՍՀՄ ճանաչումը:	2	իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում	<i>պարտադիր գր. 1, 2, 6, 7, 10</i>	
ԱՄՆ-ը երկրորդ աշխարհամարտի տարիներին/ 1939-1945թթ./	ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 1930-ական թվականներին: ԱՄՆ-ը և 1938թ. Պանամերիկյան գազաթնաժողովը և Մյունխենի համաձայնագիրը: ԱՄՆ-ի մասնակցությունը երկրորդ աշխարհամարտին, ռազմական հիմնական գործողությունները: ԱՄՆ-ը Թեհրանի և Յալթայի գազաթնաժողովներում: 1944թ. նախագահական ընտրությունները, Ֆ.Ռուզվելտի մահը: Երկրորդ աշխարհամարտի ավարտը, ԱՄՆ-ը Պոստամպ գազաթնաժողովում: Ատոմային դիվանագիտության սկիզբը	2	իրավիճակային վերլուծություն	<i>պարտադիր գր. 1, 2, 15, 27</i>	
ԱՄՆ-ը «սառը պատերազմի» տարիներին /4 ժամ/	ԱՄՆ-ը և միջազգային հարաբերությունները երկրորդ աշխարհամարտից հետո: Հ.Թրումենի նոր արտաքին քաղաքական կուրսը: «Մառը պատերազմի» սկիզբը: Թրումենի դոկտրինան: «Մարշալի պլանը»: ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի ստեղծումը: Մակկարտիզմը և ներքաղաքական իրադրությունը: ԱՄՆ-ը և կորեական պատերազմը: 1952 թ. նախագահական ընտրությունները: Դ. Էյզենհաուերի ներքին և արտաքին քաղաքականությունը: Ջոն Քենեդիի նախագահությունը: ԱՄՆ-ի հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ, Կարիբյան ճգնաժամը: Ջ. Քենեդու մահը, Լ. Ջոնսոնի նախագահությունը: «Մեծ հասարակություն» ծրագիրը: 1964թ. ընտրությունները: Պատերազմը Վիետնամում: Ներքաղաքական վիճակի սրումը: Ռ. Նիքսոնի նախագահությունը: «Գուամի դոկտրինան»: 1972թ. ընտրությունները: «Ութերգեյթյան խայտառակությունը»: Ջ. Ֆորդի կառավարումը:	2	իրավիճակային վերլուծություն	<i>պարտադիր գր. 1, 2, 6, 11, 15</i>	
ԱՄՆ-ը 1977-2020թթ.	Ջ.Քարտերի նախագահությունը: Չինաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:	2	իրավիճակային վերլուծություն	<i>պարտադիր գր. 1, 2, 6, 15</i>	

